ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՂԵՎՆԻՆ

ՀԱՆՍ ՔՐԻՍՏԻԱՆ ԱՆԴԵՐՍԵՆ

Անտառում մի սքանչելի եղևնի կար: Նրա տեղը լավն էր, արև էր ընկնում ու բավականաչափ օդ կար, իսկ շուրջն աճել էին բազմաթիվ իրենից մեծ ընկերներ՝ եղևնիներ ու սոճիներ: Բայց փոքրիկ եղևնին այնքան արագ էր աճում, որ չէր մտածում ոչ ջերմ արևի, ոչ զով օդի մասին, նրա հոգը չէին գյուղացի երեխաները, որոնք շրջում զրուցում էին՝ անտառում մորի ու ելակ հավաքելով: Հաճախ նրանք գալիս էին լի տարաներով կամ ելակները ուլունքի պես բարակ ծղոտների վրա էին շարում ու նստելով եղևնու տակ՝ ասում էին.

– Ինչ գեղեցիկ փոքրիկ եղևնի է:

Բայց ծառը այսպիսի խոսքեր լսել անգամ չէր ուզում:

Հաջորդ տարի եղևնու բունը հաստացավ, իսկ ևս մեկ տարի անց այն ավելի երկարեց. Եղևնու ճյուղերի՝ բնին միացման հանգույցների թվով կարելի է որոշել, թե եղևնին քանի տարեկան է:

– Ա՜խ, եթե ես էլ այնքան մեծ լինեի, որքան մյուս ծառերը,– հոգոց էր հանում եղևնին,– այն ժամանակ ես էլ կկարողանայի լայն փռել ճյուղերս, իսկ գագաթովս կդիտեի մեծ աշխարհը: Այդ ժամանակ թռչունները բույներ կհյուսեին իմ ճյուղերի արանքում, իսկ երբ քամին փչեր, ես այնպես վայելչագեղորեն գլուխս կխոնարհեի մյուսների պես:

Եվ ոչ արեգակի լույսը, ոչ թռչունների երգը, ոչ կարմրավառ ամպերը, որոնք առավոտյան ու երեկոյան լողում էի նրա գլխավերևում, բավականություն չէին պատճառում նրան:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԳԸ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՄԻ ԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ԼԻ ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐՈՎ

ՉԱՐԼԶ ԴԻՔԵՆՍ

ԱՌԱՋԱԲԱՆ

Ուրվականներով լի այս փոքրիկ գրքով ես ձգտել եմ արթնացնել Գաղափարի ուրվականին: Բայց այն չպետք է ստիպի ընթերցողներիս հիասթափվել սեփական անձից, մեկմեկուց, եղանակից և կամ ինձնից: Թող այն հաճելիորեն սավառնի նրանց տներում, իսկ նրանք երբեք ցանկություն չունենան դուրս հանելու այդ ուրվականին:

Ձեր հավատարիմ բարեկամ ու ընկեր՝
Չ. Դ.

Դեկտեմբեր, 1843

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի փոխարեն 5

Նամակ Սանտա Կլաուսից *(Մարկ Տվեն)* 7

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Եղևնին *(Հանս Քրիստիան Անդերսեն)* 11
Լուցկիներով աղջիկը *(Հանս Քրիստիան Անդերսեն)* 21
Ծեր կաղնու վերջին երազը *(Հանս Քրիստիան Անդերսեն)* 24
Մարիամի զավակը *(Գրիմ եղբայրներ)* 31
Ընկուզկոտրուկը և մկների թագավորը
(Էռնստ Թեոդոր Ամադեուս Հոֆման) 36
Ճրագալույց 36
Ընծաները 39
Հովանավորյալը 42
Հրաշալիքներ 45
Ճակատամարտ 52
Հիվանդությունը 56
Պինդ ընկույզի հեքիաթը 60
Պինդ ընկույզի հեքիաթի շարունակությունը 65
Պինդ ընկույզի հեքիաթի վերջը 69
Հորեղբայրն ու եղբորորդին 75
Հաղթանակը 77
Տիկնիկների թագավորությունը 83
Մայրաքաղաքը 87
Վերջաբան 93

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Սուրբ ծննդյան ներշնչանք *(Լուսի Մոդ Մոնթգոմերի)* 101
Մոգերի ընծան *(Օ. Հենրի)* 108
Փոքրիկ հրեշտակը *(Լեոնիդ Անդրեև)* 114

Տղան տոնածառի մոտ՝ Քրիստոսի կողքին *(Ֆ.Մ. Դոստոևսկի)* 127
Մուրացկան տղան.....127
Տղան տոնածառի մոտ՝ Քրիստոսի կողքին 129

Հոր և դստեր Ամանորի տոնը *(Ալեքսանդր Գրին)*.....134
Ընթրիքից հետո պատմված պատմություններ *(Ջերոմ Ք. Ջերոմ)*.....140
Ներածություն.....140
Այժմ պատմությունները պատմելու ժամանակն է.....146
Թեդի Բիֆլսի պատմությունը.....150
Միջերգ. բժշկի պատմությունը.....153
«Կախարդված ջրաղացը կամ ավերված տունը»
(պարոն Կումբսի պատմությունը) 154
Միջերգ.....157
Կապույտ սենյակի ուրվականը (իմ քեռու պատմությունը)...158
Կապույտ սենյակը.....161
Անհատական բացատրություն 161
Իմ պատմությունը.....162

Սուրբ ծննդյան երգը. Սուրբ ծննդյան մի արձակ պատմություն՝
լի ուրվականներով *(Չարլզ Դիքենս)*..... 171
Առաջաբան..... 171
Տաղ I. Մարլիի ուրվականը.....172
Մարլիի ուրվականը.....185
Տաղ II. Երեք ոգիներից առաջինը.....193
Պարոն Ֆեզիվինգի պարահանդեսը..... 205
Տաղ III. Երեք ոգիներից երկրորդը..... 212
Սքրուջի երրորդ այցելուն 215
Տաղ IV. Վերջին ոգին 239
Ոգիներից վերջինը 254
Տաղ V. Այս ամենի ավարտը..... 255

Սուրբ ծնունդը որսորդական տնակում *(Թոմաս Մայն Ռիդ)* 263
Թռչող աստղերը *(Ջիլբերթ Չեսթերթոն)*..... 277
Երկնագույն նռնաքարը *(Արթուր Քոնան Դոյլ)*..... 294
Մարքհեյմ *(Ռոբերտ Լյուիս Սթիվենսոն)*.....315
Երեք հաջորդական պատարագները *(Ալֆոնս Դոդե)*..... 333

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark